ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/65

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Բողոք բերող՝ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչներ՝ Ա. Ղարիբջանյանի, Մ. Կարապետյանի
«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, Տավարի ականջների պիտակների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 14.04.2022թ.-ին ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 14.04.2022թ.-ին:

15.04.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/65 համարի ծածկագիրը:

27.04.2022թ.-ին և 06.05.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 27.04.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.05.2022թ.-ին:

2. **<u>«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ն 14.04.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հայտարարել էր ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու՝ նաև Ընթացակարգ), որն իրականացվել է eauction.armeps.am համակարգի միջոցով:

ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18 ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային աճուրդի միջոցով ընտրված մասնակցին կառաջարկվի կնքել տավարի ականջների պիտակների ձեռքբերման մատակարարման պայմանագիր:

ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18 ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ZTOWN Development» LLP ընկերությունը, «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊ ընկերությունը (հետայսու՝ նաև Ընկերություն) և ևս հինգ այլ ընկերություններ:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետը եղել է 24.03.2022թ: Համաձայն հրավերի հայտերի բացումը տեղի է ունեցել էլեկտրոնային ձևով eauction.armeps.am համակարգի միջոցով: Էլեկտրոնային աճուրդը կայացել է 25.03.2022թ ժամը՝ 11:00-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25 մարտի 2022թ. թիվ 2-րդ արձանագրության 2.1 կետով արձանագրել է, որ «Նվազագույն գին առաջարկած մասնակցի «ZTOWNDevelopment» LLP ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում էր հայտի ապահովումը և որոշել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետը ծանուցվել է վերոհիշյալ մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:»

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07 ապրիլի 2022 թվականի թիվ 3-րդ արձանագրությամբ որոշել է.

«Ընդունել ի գիտություն, որ՝ Ամփոփելով ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18 ծածկագրով ընթացակարգը արձանագրում ենք, որ նվազագույն գին առաջարկած մասնակցի՝ «ZTOWN Development» LLP ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում էր հայտի ապահովումը:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետի, ծանուցվել է վերոհիշյալ մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովը 09/4805-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն, վերոհիշյալ կանխիկ փողի ձևով հայտի ապահովման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Ի պատասխան վերոհիշյալի ՀՀ ֆինանսների նախարարությունը տրամադրել է Ղազախստանի հանրապետության «ZTOWN Development» LLC ընկերության կողմից 29.03.2022թ կատարած վճարումները հավաստող մեմորիալ օրդերները:

Գնահատող հանձնաժողովը, ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության և գնահատման արդյունքում, որոշեց

ա/ ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ZTOWN Development» LLC ընկերությանը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը անգործության ժամկետ է սահմանվել 10 օրացուցային օր: Առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով ևհրավերով սահմանված կարգով կկնքվի պայմանագիր ընտրված մասնակցի հետ:»

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, հաւ!աչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջել մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշման (հետայսու նաև Կարգ) 32-րդ կետի ե) ենթակետի համաձայն հրավերով նախատեսվում է նաև հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն ուղեկցող գրությամբ:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացոյ մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «և» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի

ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հրավերի 4.3 կնահ 4-րդ ենթակետի համաձայն մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Ապահովումը կանխիկ փողի ձևով ներկայացվելու դեպքում մասնակիցը հայտում ներառում է դրա վճարումը հավաստող փաստաթղթից, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացվելու դեպքում բնօրինակից արտատված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը բանկային երաշխիքի բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է աճուրդի արդյունքներն ավարտվելուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն ուղեկցող գրությամբ:

Հրավերի 7.4 կետի համաձայն՝ Հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: . . .

Ներկայացված իրավական կարգավորումների և հրավերով սահմանված պահանջների լույսի ներքո գնահատելով Ընթացակարգով արձանագրվածը և ընտրված մասնակից ճանաչված ընկերության ներկայցրած հայտը, ապա ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է մերժեր մասնակցի հայտը և ոչ թե ճանաչեր ընտրված մասնակից:

Այսպես.

Հրավերով պահանջվող հայտի ապահովումը պետք է առկա լինի հայտը ներկայացնելու պահին և նշանակություն չունի դա կլինի կանխիկ փողի ձևով, թե՝ բանկային երաշխիքի ձևով: Հրավերով նախատեսված կարգով հայտի ապահովումը պետք է վավեր լինի հրավերը ներկայցնելու օրվանից հաշված, ինչը նշանակում է, որ մասնակիցը հայտը ներկայցնելու օրվա դրությամբ արդեն իսկ պետք է ունենա հայտի ապահովումը հիմնավորող փաստաթուղթ բանկային երաշխիքի ձևով կամ փողի ձևով վճարումը հավաստող փաստաթղթով:

Ընթացակարգով ընտրված մասնակից ճանաչված ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել հայտի ապահովում: Հայտի ապահովումը փողի տեսքով վճարումը կատարվել է 29.03.2022 թվականին, մինչդեռ հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված է եղել 24.03.2022 թվականը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25.03.2022 թվականի արձանագրությամբ որոշել է կասեցնել նիստը հավանաբար Կարգով սահմանված մեկ աշխատանքային օրով, սակայն 25.03.2022 թվականի որոշումից չենք կարող արձանագրել, որ հանձնաժողովը մեկ օրով է կասեցրել նիստը: Եթե գնահատող հանձնաժողովը մեկ

աշխատանքային օրով կասեցներ նիստը, ապա այն պետք է վերսկսեր 28.03.2022 թվականին կամ 29.03.2022 թվականին (25.03. 2022-ից հետո 26, 27 ոչ աշխատանքային օրեր են եղել), մինչդեռ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի է ունեցել 07 ապրիլի 2022 թվականին, իսկ ժամը հայտնի չէ:

Գնահատող հանձնաժողովը 07.04.2022թ որոշմամբ արձանագրել է, որ մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը, սակայն 25.03.2022թ արձանագրությունով սահմանված ժամկետի մասին ոչինչ արձանագրված չէ: Բացի այդ, եթե շտկման վերաբերյալ մասնակիցը ներկայացրած լիներ հավաստող ապացույց, ապա այդ դեպքում ինչպիսի հանգամանքից ելնելով է գնահատող հանձնաժողովը հարցում արել ՀՀ ֆինանսների նախարարությանը և 07.04.2022թ արձանագրությամբ հղում արել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված 29.03.2022թ կատարված վճարային օրդերներին, մինչդեռ 07.04.2022թ արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը պետք է նշեր մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթից տվյալներ, ինչպես սահմանված է հրավերի 4.3 կետի 4-րդ ենթակետով՝ Ապահովումը կանխիկ փողի ձևով ներկայացվելու դեպքում մասնակիցը հայտում ներառում է դրա վճարումը հավաստող փաստաթղթից:

Վերը ներկայցված փաստերը և իրավական կարգավորումները հիմնավորում են, որ ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18 գնման ընթացակարգը իրականացվել է իրավախախտումներով և «ZTOWN Development» LLC ընկերությունը չէր կարող ընտրված մասնակից ճանաչվեր, քանի որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել վավեր հայտի ապահովում:

Ի դեպ համաձայն գնահատող հանձնաժողովի 25.03.2022թ արձանագրության հայտ է ներկայացրել «ZTOWN Development» LLP ընկերությունը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվել «ZTOWN Development» LLC ընկերությունը:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ն 25.04.2022թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

«21.04.2022թ թիվ 01/6202-2022 գրությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարը միջնորդել է ՀՀ ֆինանսների նախարարին բողոքարկված ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18 ծածկագրով ընթացակարգը կասեցումից հանելու խնդրանքով: Նշված գրությամբ վկայակոչված իրավական կարգավորումներով ՀՀ ֆինանսների նախարարը իրավասու չէ կասեցումից

հանել բողոքարկված ընթացակարգը, առհասարակ ՀՀ ֆինանսների նախարարը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում գտնվող բողոքի առնչությամբ իրավասու չէ ուղղորդելու, ցուցումներ տալու կամ որոշումներ կայացնելու լիազորությամբ, այլապես այն կգնահատվի անօրինական միջամտություն:

Նշված ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ բողոքը ներկայացվել է 14.04.2022 թվականին և մինչ օրս պատվիրատուի կողմից չի ներկայացվել վիճարկվող ծածկագրով ընթացակարգի նյութերը, մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սույն հոդվածի պահանջներին համապատասխան բողոք ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը դիմում է պատվիրատուին տվյալ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելու պահանջով:Սույն կետում նշված փաստաթղթերը պատվիրատուն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնում է նման պահանջ ստանալու օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե վկայակոչված հողվածով պահանջվող փաստաթղթերը պատվիրատուն ներկայացրած լիներ, ապա բողոքաբերին այն ևս հասանեփ կլիներ:

21.04.2022թ թիվ 01/6202-2022թ միջնորդությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարը ընթացակարգը կասեցումից հանելու անհրաժեշտությունը «հիմնավորել է», որ «. . . տավարի ակաեջապիտակեերի ձեռքբերումը հրատապ է և բխում է հանրային շահից, իսկ գործընթացի երկարաձգումը կխախտի միջոցառումների կատարման ժամանակացույցով նախատեսված ժամկետները»:

Փաստացի ՀՀ էկոնոմիկայի նախարարը չի ներկայցրել հիմնավորում ընթացակարգը կասեցումից հանելու վերաբերյալ, թե որն է հանրային շահը հանդիսանում տավարի ականջապիտակների ձեռքբերման համար, մեկնաբանված, ներկայացված չէ, միջոցառումների իրականացման ի նչ ժամկետներ են սահմանված, ևս ներկայացված չի միջնորդությամբ: Անհիմն միջնորդությունից կարող ենք արձանագրել, որ պարզապես ցանկանում են իրենց անօրինական գործողությունը հևարավորինս շտապ ավարահն հասցնել:

Եթե ՀՀ էկոնոմիկայի նախարարության համար միջոցառումների կատարման ժամանակացույցով նախատեսված ժամկետներն իրոք կարևոր է և այն բխում է հանրային շահից (թեև չհիմնավորված է այս դեպքում հանրային շահը և ինչումն է կայանում այդ շահը), ապա տավարի ականջապիտակների ձեռքբերման նպատակով 31.01.2022

թվականին հրապարակված ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով ընթացակարգն անօրինական կերպով չկայացած չէր հայտարարվի:

Այսպես.

ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով ընթացակարգի հրավերը հրապարակվել է 31.01.2022թ, հայտերի բացումը տեղի է ունեցել էլեկտրոնային ձևով eauction.armeps.am համակարգի միջոցով, հայտարարությունը հրապարակվելու օրվանից հաշված 16-րդ օրը ժամը 15:00-ին: Հայտերի բացումը տեղի է ունեցել 16.02.2022թ ժամը 15:00-ին:

Կայացած ընթացակարգով առաջին տեղ է զբաղեցրել «ԷՅՋ ՋԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊ ընկերությունը 289 200 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) առաջարկած գնով: Նշված ընթացակարգին ևս մասնակցել է «ZTOWN Development» LLC ընկերությունը 444 157 601.93 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) առաջարկած գնով:

ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2022 թվականի փետրվարի 18-ի թիվ 4-րդ արձանագրությամբ որոշել է պայմանագիր կնքել «ԷՅՋ ՋԻ ԷՅՋ ՔԱՄՓԱՆԻ» ՍՊ ընկերության հետ: Սակայն ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23,02.2022թ ժամը 14:00-ի արտահերթ նիստի թիվ 5-րդ արձանագրությամբ որոշում է ընթացակարգը չկայացած հայտարարել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով: Նշված որոշման «հիմք» է հանդիսացել ՀՀ ֆինանսների նախարարության Մ 5919-2022 գրությունը, համաձայն որի իբրև 17.02.2022 թվականին ժամը 15:00-ից մինչև 15:10-ն ընկած ժամանակահատվածը էլեկտրոնային աճուրդների համակարգը աշխատել է խափանումներով, ինչի արդյունքում խոչընդոտվել է ժամը 15:00-ից մինչև 15:30-ն անցկացվելիք աճուրդների բնականոն ընթացքը:

Այսպիսով, ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 16.02.2022թ ժամը 15:00-ին, իսկ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության Մ 5919-2022 գրության էլեկտրոնային աճուրդների համակարգը խափանումներով է աշխատել 17.02.2022 թվականին:

Վերոգրյալ ներկայացված փաստերից ակնհայտ է, որ եթե ՀՀ էկոնոմիկայի նախարարության համար իսկապես հանրային շահ գոյություն ունենար և միջոցառումների իրականացման ժամկետը մտահոգող լիներ, ապա անօրինական ձևով չկայացած չէին հայտարարի ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ընթացակարգը և ևս մեկ ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18 ծածկագրով ընթացակարգ չէին իրականացնի հատուկ «ZTOWN Development» LLC ընկերության համար:

Այսպիսով ՀՀ էկոնոմիկայի նախարարի միջնորդությունն անհիմն է և ենթակա չէ բավարարման:

Ի լրում 14.04.2022թ ներկայացրած բողոքի.

«ZTOWN Development» LLC ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունենալով վավեր հայտի ապահովում, այնուհետև հայտերը բացելուց հետո Պատվիրատուն հնարավորություն է տվել շտկելու թերությունը և նշված ընկերությունը իբրև թե ներկայացրել է հայտի ապահովում, սակայն այնուամենայնիվ իր կողմից չի ներկայացվել հայտի ապահովումը: Իսկ ներկայացված անդորրագրերը ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ընդունվելու դեպքում էլ չեն կարող վավեր լինել հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, քանի որ դրանք ներկայացվել են հայտը ներկայացնելու օրվանից հետո:

Կից ներկայացնում ենք թվով 5 հատ բանկային փոխանցման անդորրագրեր: Ներկայացված անդորրագրերի համաձայն ստացող կողմ (բենեֆիցիար) է համարվում Ադրբեջանի հանրապետություն, ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է Մելիք Ադամյան 1 հասցեում:

Այս ապացույցները ևս վկայում են, որ ընթացակարգով առաջին տեղ զբաղեցնող Ղազախստանում գտնվող «ZTOWN Development» LLC մասնակիցը չունի բավարար միջոցներ նույնիսկ հայտի ապահուխում ներկայացնելու համար:»:

«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ն 04.05.2022թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«ԳԲՔԱ-ԼՕ-2022/65 ծածկագրի ներքո քննվող բողոքի առնչությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացրած նյութերը և ՀՀ էկոնոմիկայի նախարար Կ. Քերոբյանի դիրքորոշումն (գրությունը ամսաթիվ և համար չունի, բաղոքաբերն այն ստացել է 29.04.2022 էլ. եղանակով) ուսումնասիրելով հայտնում ենք հետևյալը.

1. Նյութերում առկա «Գնառաջարկ» վերնագրված screenshot նյութից (կից ներկայացվում է) չենք կարող արձանագրել, որ «ZTOWN Development» LLC մասնակիցը հայտի ապահովման հավաստումները ներկայացրել է 28.03.2022 թվականին:

Մինչդեռ, նյութերում առկա է այլ հավասող ապացույցներ, որ «ZTOWN Development» LLC մասնակիցը հայտի ապահովումը, ֆինանսական վճարման տեսքով, կատարել է 29.03.2022 թվականին:

ՀՀ ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարը 01.04.2022թ № 1/12-2/5522-2022 գրությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարության գխավոր քարտուղարին

հայտնել է, որ «Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.03.2022 թվականի Ձեր թիվ 09/4805-2022 գրության, կից տրամադրում ենք Ղազախստանի Հանրապետության «ZTOWN Development» LLC ընկերության կողմից 29.03.2022 թվականին կատարված վճարումները հավաստող մեմորիալ օրդերները:»

Համաձայն ներկայցված screenshot-ի ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը թիվ 09/4805- 2022 գրությունը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացրել է 30.03.2022թ ժամը 17:09-ին:

Բացի այդ, ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18 ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07 ապրիլի 2022 թվականի թիվ 3-րդ արձանագրությամբ ևս արձանագրել է, որ «ZTOWN Development» LLC մասնակիցը 29.03.2022 թվականին է կատարել վճարումները:

2. ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ. Քերոբյանն իր դիրքորոշմամբ հայտնել է, որ «ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն ծանուցվել է վերոհիշյալ մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Հավելենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ ամրագրված չէ, որ հայտի ապահովումը շտկման ենթակա չէ:»

ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվում է մեկ աշխատանքային օրով, մինչդեռ ըստ ընթացակարգը գնահատող հանձնաժողովի թիվ 3-րդ արձանագրության կասեցման ժամկետի ավարտից հետո նիստ չի հրավիրվել, այլ այն տեղի է ունեցել 07 ապրիլի 2022 թվականին, որը համարվում է կարգի խախտում:

Նախարարի նկատի ունեցած խախտումը մասնակցի կողմից չի շտկվել վերոհիշյալ վկայակոչված 41-րդ կետով սահմանված ժամկետում, դրա վերաբերյալ առկա է անհերքելի հափսստում, որ վճարումը կատարվել է 29.03.2022 թվականին:

Ինչ վերաբերում է օրենսդրությամբ ամրագրված լինել չլինելուն, ապա՝ ՀՀ սահմանադրության 6-րդ հոդվածն ամրագրում է օրինականության սկզբունքը: Համաձայն նշված հոդվածի 1-ին մասի՝

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավաոու են կատ ար ելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18 ընթացակարգի հրավերով և գնումների ոլորտը կարգավորող նորմերով (նորմերը նշված են բողոքում) հստակ ամրագրված է, որ հայտի ապահովումը պետք է առկա լինի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ: Եթե շտկում է

ներկայացնում մասնակիցը, ապա հայտի ապահովման առկա լինելը պետք է հավաստվի ամսաթվով մինչ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, այլ ոչ թե ակնկալեր, որ հաղթող կճանաչվի, որից հետո կներկայացևի հայտի ապահովում: Այս տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում օրենսդրի և գործադիրի կողմից ամրագրված կարգավորումներն իմաստազուրկ կլինեն և կարող է այլևս չկիրառվել մասնակիցների կողմից հայտ ներկայացնելիս, պարզապես կարող են սպասել առաջին տեղ զբաղեցնող ճանաչվեն, որից հետո կներկայացնեն հայտի ապահովում:

Ընթացակարգով ընտրված մասնակից ճանաչված ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել հայտի ապահովում: Հայտի ապահովումը փողի տեսքով վճարումը կատարվել է 29.03.2022 թվականին:

Եթե պատվիարտուն վստահ լիներ կամ ունենար հավստի ապացույց, որ մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սահմանված ժամկետում, ապա կարիք չէր փնի ՀՀ ֆինանսենրի նախարարությանց հավաստող ապացույց խնդրելու, թեև հայտի ապահովման շտկում ներկայացնելիս էլ պետք է հավաստում լիներ, որ այն եղել է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, ինչպես սահմանված է ընթացակարգի հրավերով և 526-Ն որոշմամբ:

Եթե նույնիսկ մասնակիցը հայտի ապահովումը գումարի փոխանցումը, կատարել է 28.03.2022 թվականին, ապա այն չէր կարող գնահատվեր որպես շտկում, քանի որ հայտի ապահովումը պետք է առկա լիներ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, թեև վճարման անդորրագրերում ևս նշագրված է 29.03.2022թ:

3. Անդրադառնալով ընթացակարգը գնահատող հանձնաժողովի կողմից թույլ տրված իրավախախտումների առավել կամ նվազ կարևոր լինելուն, որը կարող է հանգեցնել ընթացակարգը չկայացած հայտարարելուն, ապա առհասարակ ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով որոնք հանդիսանում են ՀՀ օրենսդրության մասը ամրագրված չէ, թե որ նորմի խախտումը կարող է հանգեցնել ընթացակարգը չկայացած հայտարարելու և որը կարող է ունենալ նվազ կարևորություն: Ոլորտը կարգավորող նորմերի խախտման առավել կամ նվազ կարևոր գնահատման սանդղակ նախատեսված չէ որևէ նորմատիվ ակտով, որով կարող է ղեկավարվել ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձը կամ դատարանը և գնահատել այս կամ այն նորմի խախտման դեպքում ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած կամ ոչ և բավարարվել միայն բողոքի քննարկմամբ պարզապես արձանագրելով, որ տեղի է ունեցել օրենքի կամ կարգի խախտում:

Եթե ընթացակարգը կայացել է օրենքի թեկուզև մեկ դրույթի խախտմամբ, ապա այն պետք է հայտարարվի չկայացած, քանի որ օրենքի խախտման արդյունքում կայացած ընթացակարգը ոտնահարում է այլոց իրավունքները, չի ապահովում օրենքի նպատակը և սկզբունքները:»:

3. <u>ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 14.04.2022թ.-ի թիվ /ԲՔԱ-Լ0/2/6604-2022 գրությամբ դիմել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 14.04.2022թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 21.04.2022թ.-ի թիվ 01/6202-2022 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման միջոցառումների իրականացման» ծրագրի շրջանակներում ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18 ծածկագրով տավարի ականջապիտակների ձեռքբերումը հրատապ է և բխում է հանրային շահերից, իսկ գործընթացի երկարաձգումը կխախտի միջոցառումների կատարման ժամանակացույցով նախատեսված ժամկետները:

Հիմք ընդունելով վերոհիշյալը և առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» 06.12.2018թ. N 600-Ն հրամանի 23-րդ կետով՝ խնդրում ենք ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18 ծածկագրով «Տավարի ականջների պիտակների» գնման գործընթացի կասեցումը հանելու մասին որոշում կայացնել:»:

Պատվիրատուն 29.04.2022թ.-ի թիվ 01/6025-2022 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Ձեզ ենք ներկայացնում ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18 ծածկագրով «Տավարի ականջների պիտակների» ձեռքբերման ընթացակարգի բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև ներկայացնում ենք մեր դիրքորոշումը վերոհիշյալ բողոքի վերաբերյալ:

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար 04.03.2022 թվականին ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18 ծածկագրով «Տավարի ականջների պիտակների» ձեռքբերման նպատակով հայտարարվել էր էլեկտրոնային աճուրդ:

Նվազագույն գին առաջարկած Ղազախստանի Հանրապետության ZTOWN Development LLC ընկերության հայտի գնահատման արդյունքում արձանագրվել է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն ծանուցվել է վերոհիշյալ մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Հավելենք, որ «Գնումների մասին» օրենսդրությամբ (այսուհետ՝ Օրենսդրություն) ամրագրված չէ, որ հայտի ապահովումը շտկման ենթակա չէ:

Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել և ներկայացրել է կանխիկ փողի ձևով վճարված հայտի ապահովումը հավաստող փաստաթղթերը՝ անդորրագրերը (28.03.2022թ.), որոնց համաձայն գումարը փոխանցվել է Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին:

Անդորրագրերի առկայությունը հիմք է հանդիսանում, որպեսզի ներկայացված հայտը շտկված համարվի, սակայն Պատվիրատուն լրացուցիչ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն և ստացել է համապատասխան հավաստում, որ կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը փոխանցված է Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին (կատարած վճարումները հավաստող մեմորիալ օրդերները կցվում են):

Բողոքում ներկայացված է նաև, որ գնահատող հանձնաժողովը խախտել է ժամկետները, սակայն համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 32-րդ մասի 21-րդ կետի հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում, ինչն էլ ապացուցում է, որ գնահատող հանձնաժողովը չի խախտել օրենքով նախատեսված հայտերի գնահատման ժամկետները:

Ինչ վերաբերում է Ղազախստանի Հանրապետության ZTOWN Development LLC -ի անվանմանը, նշենք, որ համակարգում մուտքագրված է նաև "ZTOWN Development" LLP անվանումը, որի մասին հավաստումը կցվում է փաստաթղթերին:

Որպես ամփոփում նշենք, որ Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները իրավաչափ են և հիմնավորված Օրենսդրությամբ:»:

Պատվիրատուն 06.05.2022թ.-ի թիվ 09/7156-2022 գրությամբ ներկայացրել է դիրքորոշում:

4. <u>ԳԲՔԱ-LO-2022/65 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից Տավարի ականջների պիտակների ձեռքբերման նպատակով 04.03.2022թ.-ին հայտարարվել է «ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ են ներկայացրել նաև «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ն և «ZTOWN Development» LLC-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 25.03.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ «ZTOWN Development» LLC-ի կողմից հայտի փաթեթում բացակայում է հրավերով պահանջվող հայտի ապահովումը:

iv. Նույն կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և մասնակցին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

v. Հանձնաժողովի 07.04.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ընթացակարգի արդյունքներով ընտրված մասնակից ճանաչել «ZTOWN Development» LLC-ին, այն պատճառաբանությամբ, որ Պատվիրատուն 09/4805-

2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ Ընկերության կողմից կանխիկ փողի ձևով հայտի ապահովման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով, որին ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել է Ղազախստանի Հանրապետության «ZTOWN Development» LLC-ի կողմից 29.03.2022թ.-ին կատարած վճարումները հավաստող մեմորիալ օրդերները:

vi. «ZTOWN Development» LLC-ն «ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովման շտկում, Հանձնաժողովին է ներկայացրել «ForteBank»-ի կողմից 28.03.2022թ.-ին տրամադրված 296 համարի վճարման հանձնարարագիրը՝ կանխիկ փողի ձևով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 14.04.2022թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ

մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի

ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Հրավերի 7.1-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Հրավերի 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը

զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման

վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ գործադիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, այդ թվում՝ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից Տավարի ականջների պիտակների ձեռքբերման նպատակով 04.03.2022թ.-ին հայտարարված «ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.03.2022թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 2.1 կետով արձանագրվել է, որ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ «ZTOWN Development» LLC-ի կողմից հայտի փաթեթում բացակայում է հրավերով պահանջվող հայտի ապահովումը, ինչով պայմանավորված որոշում է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և մասնակցին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հանձնաժողովի 07.04.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշում է կայացվել ընթացակարգի արդյունքներով ընտրված մասնակից ճանաչել «ZTOWN Development» LLC-ին, քանի որ Ընկերությունը «ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովման շտկում, Հանձնաժողովին է ներկայացրել «ForteBank»-ի կողմից 28.03.2022թ.-ին տրամադրված 296 համարի վճարման հանձնարարագիրը՝ կանխիկ փողի ձևով:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով «ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ հրավերը, «ZTOWN Development» LLC-ի, կողմից ներկայացված հայտի ապահովումները, Հանձնաժողովի կողմից կազմված

արձանագրությունները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից, Մասնակիցների հայտերը բավարար գնահատելու և որոշ չափաբաժինների մասով ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին կայացված որոշումը բխում է Օրենքի 34-րդ հոդվածով, Կարգի 42-րդ կետով և Հրավերի 8.11-րդ կետով սահմանված դրույթների պահանջներից:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից Տավարի ականջների պիտակների ձեռքբերման նպատակով 04.03.2022թ.-ին հայտարարված «ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «ZTOWN Development» LLC-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում կայացնելով, գործել է իրավաչափ, քանի որ Ընկերության կողմից թույլ չի տրվել Կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ և Հրավերի 4.3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դրույթների խախտում:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից 06.05.2022թ.-ին ներկայացված դիրքորոշմանը, ապա Բողոքներ քննող անձն այն քննարկման առարկա չի դարձնում, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց գործունեության» կարգի 19-րդ կետով սահմանվել է, որ Անձը պարտավոր է որոշման մեջ հիմնավորված և պատճառաբանված ձևով անդրադառնալ բողոքարկման գործընթացի կողմերի՝ մինչև բողոքը բավարարելու կամ մերժելու մասին որոշում կայացնելու նպատակով հրավիրվող նիստի անցկացման մասին հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրը ներառյալ ներկայացրած փաստաթղթերում, գրավոր դիրքորոշումներում, ներկայացված ապացույցներում բերված բոլոր փաստարկներին, տեղեկագրում և/կամ էլեկտրոնային գնումների համակարգում հրապարակված նյութերին:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ վերոնշյալ դրույթը ինքնանպատակ չէ և ուղղված է ապահովելու հենց առաջինը բողոքարկման ընթացակարգին ներգրավված կողմերի հավասար մրցակցության իրավունքը, քանի որ յուրաքանչյուր կողմ իրավունք ունի ծանոթանալու և իր դիրքորոշումը հայտնելու մյուս կողմի կողմից ներկայացրած ցանկացած փաստաթղթի: Իսկ սույն դեպքում՝ Պատվիրատուն գրությունը ներկայացրել է որոշման հրապարակման նույն օրը, որը չի կարող Բողոքներ քննող անձի կողմից դիտարկվել (քննարկման առարկա դարձվել)՝ վերը նշված պատճառաբանություններով պայմանավորված:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «ՀՀԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-22/18» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը չկայացած հայտարարելու պահանջի մասին 14.04.2022թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 14.04.2022թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/65 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**